ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 19-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարալանջի փողոցի մի հատվածն (սկսվում է Վահրամ Փափազյան փողոցից և ձգվում մինչև Ազատության պողոտայի վերջնամաս, այնուհետև, շարունակվելով՝ հատում է Ալ.Մյասնիկյան պողոտան, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների սահմանագծով կիսաշրջանաձև շարունակվում է և հասնում Ա. Արմենակյան փողոց) անվանափոխել Հայաստանի ազգային հերոս, «Իզմիրլյան» հիմնադրամի հիմնադիր Տիգրան Իզմիրլյանի անվամբ՝ «Տիգրան Իզմիրլյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Սարալանջի փողոցի մի հատվածը Հայաստանի ազգային հերոս Տիգրան Իզմիրլյանի (Դիկրան Սարկիսի Իզմիրլյան) անվամբ անվանափոխելու առաջարկությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի հանդեպ նրա ունեցած բացառիկ ծառայությունների, երկարամյա ազգանվեր գործունեության և Հայաստանի Հանրապետության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի արժևորման անհրաժեշտությամբ: Նրա գործունեությունը հատկապես նշանակալի է եղել կրթության, առողջապահության, զբոսաշրջության, տնտեսական զարգացման, ինչպես նաև տեխնոլոգիական նորարարությունների ոլորտներում: Անվանափոխության վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է «Իզմիրլյան» հիմնադրամի տնօրենի կողմից:

Տիգրան Իզմիրլյանը ծնվել է 1926 թվականին:

Ավարտել է Ալեքսանդրիայի Վիկտորիա քոլեջը (Եգիպտոս), ստացել տնտեսագիտության բակալավրի աստիճան՝ Իլինոյի համալսարանում և մագիստրոսի կոչում՝ Հարվարդի բիզնես դպրոցում: Տասնամյակներ շարունակ զբաղվել է միջազգային ֆինանսական շուկաներով և ձեռնարկատիրությամբ: Նա ղեկավարել է շվեյցարական «Alimenta» ընկերությունը՝ հասնելով գլոբալ հաջողությունների գյուղատնտեսական ապրանքների արտահանման և ներդրումների ոլորտում: Իզմիրլյանների ընտանիքը լայնածավալ ներդրումներ է ունեցել Եվրոպայի և ԱՄՆ-ի անշարժ գույքի ու գյուղատնտեսության մեջ (այդ թվում՝ «More London» գրասենյակային համալիրը Լոնդոնում):

1994 թվականին Երևանում հիմնադրել է «Իզմիրլյան» հիմնադրամը՝ ի հիշատակ իր ծնողների (Սարգիս և Մարիա Իզմիրլյաններ)՝ հայրենիքին աջակցելու և տնտեսական ու կրթական ծրագրեր իրականացնելու նպատակով: Նրա և տիկին Ելենա Իզմիրլյանի աջակցությամբ արդիականացվել և վերազինվել է Երևանի բժշկական կենտրոնը, որը 2012 թվականին վերանվանվել է «Իզմիրլյան» ԲԿ: Հիմնադրամի միջոցներով Հայաստանում և Արցախում իրականացվել են առողջապահական, կրթական, սոցիալական ու ենթակառուցվածքային բազմաթիվ ծրագրեր:

Պարգևատրվել է Հայրենիքի և Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշաններով: 2024թ. արժանացել է Հայաստանի ազգային հերոսի կոչմանը:

Տիգրան Իզմիրլյանը մահացել է 2024 թվականի օգոստոսի 17-ին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի՝ նշանավոր որևէ անհատի անվամբ կարող է անվանակոչում կատարվել նրա մահվանից առնվազն 5

տարի հետո: Մինչև նշանավոր որևէ անհատի մահվան 5 տարին լրանալը՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչումը կամ անվանափոխումը կատարվում է համապատասխան համայնքի ավագանու որոշմամբ՝ այդ նպատակով անցկացված հանրային լսումների արդյունքների հիման վրա:

Սույն անվանափոխության նպատակով ընդունվել է քաղաքապետի որոշում՝ հանրային քննարկում կազմակերպելու վերաբերյալ: Երևանի պաշտոնական համացանցային կայքում և «Ակտիվ քաղաքացի» հարթակում հրապարակվել է կազմակերպվող հանրային քննարկման հրավերը, ինչպես նաև այն փակցվել է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում և վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

Հանրային քննարկման հրավերով սահմանված ժամկետում նախագծի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, ինչպես նաև հանրային բաց լսումներին մասնակցելու դիմումներ չեն ներկայացվել:

«Ակտիվ քաղաքացի» հարթակում նախագիծը դրվել է քվեարկության և ստացել է 177 կողմ քվե:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետն՝ առաջարկվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարալանջի փողոցի մի հատվածն (սկսվում է Վահրամ Փափազյան փողոցից և ձգվում մինչև Ազատության պողոտայի վերջնամաս, այնուհետև, շարունակվելով՝ հատում է Ալ.Մյասնիկյան պողոտան, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների սահմանագծով կիսաշրջանաձև շարունակվում է և հասնում Ա. Արմենակյան փողոց) անվանափոխել Հայաստանի ազգային հերոս, «Իզմիրլյան» հիմնադրամի հիմնադիր Տիգրան Իզմիրլյանի անվամբ՝ «Տիգրան Իզմիրլյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 19-րդ կետերով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՓՈՂՈՑԸ ՏԻԳՐԱՆ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	**Առաջարկության, առարկության հեղինակ**	**Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն**	**Պարզաբանում/ եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	2	3	4	5
1.	Առաջարկություններ չեն ներկայացվել	-	-	-

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ